55. Հայազգի Սպահանցի Գոլուստ խան Վարդանեանց Ա. Թարգման Դավրէժի Անգլիական ընդհանուր հիւպատոսարանի, արժանացաւ 2 կարգի Արեգակ և Առիւծի նշանի։

## † ՄԱՀԱԶԴ

Դատախազակ ու գրագէտ Հայրապետ Սաւալանեան վախճաներ է։ Թարգմանած է Ալ-Ղուրան, Գիտութեան Աստուածոյ. գրած է Երուսաղէմայ Ս. Յակոբ միաբանութեան յիշատակարան մը և նոյն վանքին ժամանակագրական պատմութիւնը (անտիպ). Ողբերգութիւն Ս. Ներսէս, Մեծագործ Մանկանց, Սրբագործութիւն է հայրենիքեան, Կենսագրական յուշեր. նախնեաց մատենագրութենէն Մովսէս Խորենացւոյ, Մեսրոպ Աղուանից և Ղեւոնդեայ Եզնիկայ երկերն յառաջաբանով եւ լուսաբանելով հրատարակած է. ատեն մը վարած է նաեւ Արշալոյս և Մեծ բերրերու խմբագրական պաշտօնը։ Հանգուցեալը բնիկ Իզմիրցի է 80 տարեկան ծառայի մէջ կը կնքէ իր մահկանացուն։

Վախճաներ է Լոյս Ուխտը լրագրի (1867–1901) խմբագիրն Իզմիրցի Սահակ Ոսկան։ 1855ին Փարիզու մէջ հրատարակած է Արեւելք թերթը, հոն նոյնպէս 1861ին հրատարակած է Արեւմուտք թերթը։ Սարդինիայի մէջ Գավուրի քարտուղարի պաշտօնը վարած է։ Գրած է Հռովմէական գործեր եւ Ներսէս Հայկազեան ատենական-ները. որոնք կատարեալ «Բանգիւ»ներ են։ Վարած է նոյնպէս Իզմիրի Մեսրոպեան վարժարանի տեսչութեան պաշտօնը, բայց Լոյսի իր գլուխ ու դիւրաբորբոք բնաւորութեան ազգին համար գրականութեամբ ու դատախազութեամբ մի տարիէն աւելի չէ կրցած իր սկսած ծառայութիւնը յառաջ վարել. վերջապէս 1867էն սկսեալ Լոյսութեան դէմ սրդողած, հակառ կը բաղու ազգին օգտակար ըլլալու Նուիրական գաղափարը (ողբալի՜ կորուստ!!)։ Չին հայ լրագրութեան տեղեակ անձինք անտարակոյս տակաւին չեն մոռցած թէ հանգուցեալը՝ երիտասարդ հասակին մէջ իր Արեւելք լրագրով ինչ օգնութիւն մը հանդիսացաւ համար որքան երկ բափեր է։

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ. Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում։ Հատոր առաջին։ Գրեց Լէօ Թիֆլիս. տպ. Վրաց Հրատ. Ընկ. 1901. Գինն է 1 ռբլ. 50 կոպ.։

ՊԱՏԿԵՐՆԵՐ. վերջին տարիների տաճկահայոց կեանքից։ Գրեց Ա. Աճառեան. Հրատարակեց Վառ. Բանանեան։ Մոսկուա. տպ. Վառվառէ Գատցուկի 1900։ Գինն է 1 ռբլ.։

ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ տոնի առիթով։ Գրեց Ս. Շահազիզեան։ Մոսկուա տպ. Ք. Բարխուդարեանի 1901. Գինն է 75 կոպ.։

ԳԱՆՁԱՐԻ ԳՈՒՍԱՆ Ա. Բ. Հատոր գրեց Ե. Լալայեան. Թիֆլիս. տպ. Կ. Մարտիրոսեանցի 1901։ Իւրաքանչիւր հատորի գինն է 80 կոպ.։

ԹԱՆԿԱՑ ԹԱՂԽԱԴԽԱՆՑ (եղերերգութիւն յօրհաս) Արար Հեղինակ Քնարին Սիրահարի 1837։ Թիֆլիս. տպ. Մ. Շարաձէ. 1893. Գինն է 40 կոպէկ. (Նուէր Մատենադարանիս ի Մեծ. Մեսր. Յ. Սէթեանց)։

ՆՈՐ ԴՊՐՈՑ Բ. Պրակ. Հրատարակիչ Ս. Գաւթեան։ Կ. Պոլիս։ Տպ. Նշան Կ. Պէրպէրեան. 1901։ Գինն է 5 ղրշ.։

ԴԵՍԵՒՈՎՍԿԻՑ (Մարդասիրութեան և աշխատանքի ազնիւ գինուորը)։ Գրեց բժշկ. Ս. Շահնազարեանց տպ. Ք. Բարխուդարեան. Մոսկուա 1901. Գինն է 60 կոպ.։

## ՆՈՒԷՐ

Բարձրապատիւ Գր. Պըլըքըեան մի տարեկան «Բազմավէպ» կը նուիրէ Ժընէվի Հայ Ուսանող. Ընկերութեան։

Գոլորատա Սըրինկէն ոմն ազգասէր մեզ յղած էր մի տարեկան «Բազմավէպ»ի և մի օրինակ «Ուրբունի»ի բաժնեգին. նըւէրն ալ յատկացուցինք Թուրիզի Հայուհեաց բարեգործական ընկերութեան։

## ԱԶԴ

☛ Ժամանակին մենք յայտնած էինք որ ինչ ինչ իրաւացի պատճառներով կը դադրինք այլ և այլ Որբանոցներու, Ընթերցարաններու և Վարժարաններու ձրի «Բազմավէպ» յղելէն. Հակառակ մեր այս յայտարարութեան դիմումները այս տարի ալ աւելի չատցան, ուստի կը ստիպուինք մենք մեր կողմանէ փոքրիկ զիջողութիւն մ'ընելով կէս բաժնեգին [5 ֆրանք] միայն պահանջել, յուսալով որ նոյն կրթական ազգային հաստատութիւնք համեստ մեկենասներ կրնան գտնել։ ☚